



ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԻՒՆ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ

Պեյրուք, 5 Հոկտեմբեր 2011

Դիւան թիւ 222/11

Տիկին Հրանուշ Յակոբեան
ՀՀ Սփիւռքի նախարար

Ազնուափայլ Տիկին Յակոբեան,

Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ ներկայացուցիչներու գեկուցումներէն տեղեկացած ըլլալով Համահայկական Համաժողովի մասին, որ տեղի ունեցաւ 19-20 Սեպտեմբեր 2011-ին Երեւանի մէջ, եւ որուն, դժբախտաբար, հնարաւորութիւնը չունեցանք անձամբ մասնակցելու, ուրախութեամբ եւ գոհունակութեամբ արձանագրեցինք այս իրադարձութեան աննախընթաց բնոյթը: Սոյն պատմական բնոյթը, որ յատկանշուեցաւ Համահայկական ներկայացուցչութեամբ, ելոյթներու եւ քննարկումներու անկաշկանդութեամբ, աշխարհասփիւռ եւ հայրենարնակ մեր ժողովուրդը տագնապեցնող խնդիրներու սրտքաց արծարծումով, գանձեց միասնական ու համադրուած աշխատանքով դիմագրաւելու հրամայականի շեշտադրումով եւ, վերջապէս, բժախնդիր կազմակերպուածութեամբ, որ կը պարտինք Ձեր լայնախոհութեան եւ անխնց ու բոլորանուէր աշխատանքին, որուն վկան եղանք:

Ուստի, ջերմօրէն կը շնորհաւորենք Ձեզ Համաժողովի այս բացառիկ յաջողութեան համար եւ կը մաղթենք որ ան մեկնակէտը դառնայ Համաժողովի առաջադրանքներու իրագործումին առաջնորդող գործնական քայլերու, որոնց յաջողութեամբ պսակոււմը պայմանաւորուած կը մնայ Հայաստանի պետականութեան յարանուն հզօրացումով, միարանութեամբ եւ Հայաստան-Սփիւռք անվերապահ համագործակցութեամբ:

Ազնուափայլ Տիկին Յակոբեան, թող Ձմմառու հրաշագործ Տիրամօր բարեխօսութեամբ՝ Աստուած իր հովանին անպակաս ընէ Ձեր եւ Ձեր բոլոր գործակիցներու վրայէն, որպէսզի միեւնոյն աշխուժութեամբ եւ շրջահայեցութեամբ շարունակէք Ձեր գործունէութիւնը ի խնդիր աշխարհասփիւռ մեր ժողովուրդի համախմբումին Հայաստանի Պետութեան շուրջ եւ մեր ազգային իղձերու իրագործումին:

Հայրական օրհնութեամբ՝

+ *Stephane Djezourian* ԺԹ.

ԺՆԵՐԱԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.

Կաթողիկոս Պատրիարք Տանն Կիլիկիոյ
Կաթողիկէ Հայոց